ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 560 360, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

13.02.2012թ.
155-ի 9

ՀՀ գյուղատնտեսության նախարարության
սննդամթերքի անվտանգության պետական
ծառայության պետ պարոն Աբրամ Բախչագուլյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բախչագուլյան,

Դեկտեմբերի 16-ին “Աշտարակ կաթ”, “Դուստր Մարիաննա” եւ “Անի կաթ” ընկերությունները տուգանվեցին տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) կողմից՝ կաթնամթերքում արգելված հավելանյութ օգտագործելու եւ սխալ մակնշման համար: Ըստ ՏՄՊՊՀ-ից ստացված տեղեկության՝ Հանձնաժողովը համագործակցում է Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (ՍԱՊԾ) հետ, որպեսզի վերոնշյալ կազմակերպություններում հայտնաբերված խախտումներն ամբողջությամբ վերացվեն: Հանձնաժողովը ԻԱԿ-ին ուղղված 20.01.2012թ. պաշտոնական գրությամբ նաեւ հայտնել է, որ Աշտարակ կաթ”, “Դուստր Մարիաննա” եւ “Անի կաթ” ընկերություններում կատարված ուսումնասիրությունների ողջ փաթեթն ուղարկվել է ՍԱՊԾ, որն էլ պետք է իրականացներ կաթնամթերքի կրկնակի որակական ստուգում՝ պարզելու համար, թե արդյոք շտկվե՞լ է իրավիճակը:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Իրականացրե՞լ է ՍԱՊԾ-ն կաթնամթերքի որակական ստուգում վերոնշյալ ընկերությունների տուգանվելուց հետո:
2. Եթե այո, ապա ըստ ստուգման արդյունքների՝ հայտնաբերվե՞լ են նշված ընկերությունների կաթնամթերքի արտադրության մեջ արգելված հավելանյութեր:
3. Եթե ոչ, ապա ե՞րբ է ՍԱՊԾ-ն իրականացնելու կրկնակի ստուգում կաթնամթերք արտադրող վերոնշյալ ընկերություններում:
4. Վնասակա՞ր է, արդյոք, կոկոսի յուղի օգտագործումը կաթնամթերքի մեջ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան